Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2022 թվականի
դեկտեմբերի -ի N---Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՎՈՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ (ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ) ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կանոնները սահմանում են անհատական հանրային ամրակցված կամ շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների (այսուհետ՝ Օպերատոր) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների (դրույքաչափերի) (այսուհետ՝ Վճարներ) հաշվարկման և կիրառման կարգը:

2. Վճարները հաշվարկվում են հիմք ընդունելով միջազգային համեմատելի ցուցանիշների տվյալները, այն է՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2018/1972 (ԵՄ) կանոնակարգը լրացնող՝ Եվրոպական Միության ողջ տարածքում շարժական և ամրակցված ցանցերի ձայնային վերջնավորման առավելագույն վճարները սահմանող Եվրոպական Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի պատվիրակված (ԵՄ) 2021/654 կարգավորման 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ շարժական և ամրակցված ձայնային վերջնավորման միասնական առավելագույն վճարները (դրույքաչափերը), և կիրառվում են հետևյալ աղյուսակով սահմանված բանաձևերով ու ժամանակացույցով՝

Փոխկապակցման ծառայության տեսակը	Առավելագույն վճարի չափը				
	01.01.2023 թվականից մինչև 31.12.2023 թվականը	01.01.2024 թվականից մինչև 31.12.2024 թվականը	01.01.2025 թվականից մինչև 31.12.2025 թվականը	01.01.2026 թվականից մինչև 31.12.2026 թվականը	01.01.2027 թվականից մինչև 31.12.2027 թվականը
Հանրային շարժական հեռախոսացանցում զանգերի վերջնավորման ծառայություն	Վ = (0,7 * ՓՄ)/100	Վ = (0,55 * ՓՄ)/100	Վ = (0,4 * ՓՄ)/100	Վ = (0,2 * ՓՄ)/100	Վ = (0,2 * ՓՄ)/100
Հանրային ամրակցված հեռախոսացանցում զանգերի վերջնավորման ծառայություն	Վ = (0,07 * ՓՄ)/100	Վ = (0,07 * ՓՄ)/100	Վ = (0,07 * ՓՄ)/100	Վ = (0,07 * ՓՄ)/100	Վ = (0,07 * ՓՄ)/100

3. Սույն կանոնների 2-րդ կետի աղյուսակով սահմանված բանաձևերում Վ-ն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարն է, որը շարժական և ամրակցված կապի ցանցերի համար հաշվարկվում է առանձին և կլորացվում է մինչև հարյուրերորդական նիշ, իսկ ՓՄ-ն հաշվարկային տարվա նախորդող տարվա սեպտեմբերի 1-ին, հոկտեմբերի 1-ին և նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ 1 եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքների միջին մեծությունն է:

4. Սույն կանոնների 2-րդ կետի աղյուսակով սահմանված առավելագույն վճարից ցածր վճար կիրառելու դեպքում Օպերատորն ապահովում է դրանց ոչ խտրական (միևնույն վճար) կիրառումն իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կամ շարժական կապի ցանցերի հետ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նկատմամբ: